

ՏԱՂԱՆԴԻ ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

մոտավորապես երկու տարի առաջ ներքին մեկուսացել էր մեր լայն ընկերներից մեկի արյունակից զատը: Ով ասեք, որ չէր եկել ցանկում... Այլ կերպ չէր էլ կարող լինել: Պրանից ընդամենը մի քանի ամիս առաջ նույն անձնավորությունը երկրի կան խաչորագույն կենտրոններից մի փայլուն կերպով պաշտպանեց օրական դիտարկում: Եվ ի՞նչ էր նա, քանի՞ հոգի հեռագրով կամ հեռով շնորհավորեց նրան: Ցավոք, բերրի իսկ շատերը, այդ թվում և տանքային ամենօրյա ընկերներից ք ծովացան շնորհավորել նույնիսկ վերադառնալուց հետո: Մի՞թե հնա- չ է անտարբեր մնալ նման վերա- լույսի հանդեպ: Իհարկե, ոչ: Եվ տեղի ածը նրա հոգում դառն նստվածք լի: Կուղենայի ներկայացնել նույն ազդեցության տեղ երկու կնոջ պա- լան, որը դեմ ու թեք կարծիքների տեսակ խտացում է: Նրանցից առա- ռը ինչպես պարզ դարձավ, անհրա- վ թյան դեպքում սիրով օգնում ու լցում է մարդկանց, բայց հազվա- ք ուրախանում ուրիշների հաջողու- լի, իսկ առավել հազվադեպ՝ շնորհա- լի, լսելուն պես պատասխանեց, թե լա որ, եթե չեն շնորհավորել՝ դրա- լի ընկերը ոչնչով չի տուժել, նա լակ էլ կարող է ուրախանալ իր լովյամբ: Իսկ որ մարդիկ չկարեկ- իրար: Զե՞ որ այդ դեպքում նրանք սովեն ռոբոտների: Ընդհակառակը, ռդ կինը, որ տարել է մայրական սծանը վիշտը, բայց և բազմիցս ճա- է ստեղծագործական հաջողության անքը, երկարատև լուսնունից հե- հառաչելով, մի կերպ արտաբերեց.

սիրելիս, վշտի պահին գտնվում են լակ համառ կարեկցողներ, որոնք չեն ածում, զգո՞ւմ ես դու դրա կարիքը, չ, բայց քիչ են լինում քո հաջողու- ռ ուրախացողները, իսկ ավելի քիչ՝ աջնողները: Արժե գրել այդ մասին»:

ՀՐԱՉՅԱ ՄԻՐՁՈՅԱՆ
փստապահական գիտությունների բեկ- սնու, դոցենտ

կադեմիական հրատարակչության անալիզին հատուկ (1963) ծանո- ան բազմությունների ու տեխնոլոգի- տարբերությունների բաժնում նըշ- վեց, որ այդ բանաստեղծությունը պատկանում է Գաբրիել Պատ- կանյանի գրչին (էջ 265): Թվում ան է, ամեն ինչ պարզ է ու հասկա- լյա նախ. հետագա անհշտություննե- ռի համապարհը վերջնականապես փակվեց: Սակայն «Սովետական գրող» հրատարակչության «Հայ դասականների գրադարան» մատե- նաշարով 1980 թ. լույս տեսած էջ Ռ. Պատկանյանի «Երկերի» մեջ կրկին հայտնվում է այս ստեղծա- գործությունը...

ԳԵՈՐԳԻ ՀԱԿՈՅԱՆ

Յուրաքանչյուր գեղարվես- տական ցուցահանդես հազեց- ված է գեղագիտական որո- շակի մթնոլորտով, ունի իրեն բնորոշ գաղափարական լար- վածություն: Անհատական ցուցահանդեսներում այս հաս- կացությունները դրսևորվում են շատ ավելի խտացված, ավելի ուժեղ շեշտադրումներով և բարդ գուգորդումներով, քա- նի որ գործ ունենք մեկ ըս- տեղծագործողի հետ: Ստեղ- ծագործողը նույն անհատակա- նությունն է, որոնումների, ձեռքբերումների, հետաքրքրու- թյունների նույն շրջանակը... Արվեստագետի մեծությունն էլ հենց կայանում է նրանում, որ այսպիսի «միօրինակություն» մթնոլորտում կարողանա լար- ված հետաքրքրության մեջ պահել յուրաքանչյուր այցե- լուի: Այսօրինակ քննության դիմացավ ժամանակակից ար- վեստի թանգարանում անցած տարվա վերջին բացված՝ Ռու- դոլֆ Խաչատրյանի ստեղծա- գործությունների ցուցահանդե- սը: Այն ընդգրկում էր 1980 թ. Երևանի նկարչի տանը բաց- ված առաջին անհատականից հետո ընկած վերջին երեք տարիների կատարած գոր- ծերը՝ հիսուն ավարտուն կը- տավ:

Սակայն խոսքը բնավ էլ քանակի մասին չէ, այլ գե- ղարվեստականության լակ ան- այն մակարդակի, որով էլ նը- շանավորվեց այդ ցուցահան- դեսը:

Ռուդոլֆ Խաչատրյանն ասե- լիք ունի որպես իսկական ար- վեստագետ, որը խորհելով ու փիլիսոփայորեն է նայում աշ- խարհին ու մարդկանց: Նրա պատկերած մարդիկ հոգեհա- րազատ են իրենց կերպարա- յին ամբողջական նկարագրով: Դիանք մտավորականության ներկայացուցիչներ են՝ գիտ- նական, գրող, դերասան, ռե- ժիսոր և այլն: Հոգեբանական բացահայտումները մտածված են որոշակի կանոններով. ա- ռաջին պահ թվում է, թե բը- նորդի էությունը լրիվ բացա- հայտված է և ամբողջացված,

սակայն երկար դիտելուց հե- տո պարզվում է, որ դիտողի համար տվյալ կերպարի սե- փական մեկնաբանման բազ- մաթիվ տարբերակներ կան: Այսինքն՝ նկարչի մտահղա- ցումներն այնքան են տրոհ- վում կերպարի գեղարվեստա- կան մարմնավորման մեջ, որ յուրաքանչյուրն ինքնուրույն կյանք է ստանում, դառնում նոր միջավայրի մեջ ապրող անձնավորություն: Ռ. Խաչա- տրյանի դիմանկարներում պատկերված մարդիկ չունեն հոգեկան ապրումների ընդ- գծված դրոշմ, բայց օժտված են ներքին ակտիվությամբ, զուրկ են «արտաքին շարժում- ներից», սակայն դրված են շարժում հոգեվիճակների մեջ: Այդպիսիք են ակադեմիկոս Ա. Միգուլի, դերասան Վ. Մը- սրյանի, նկարչուհի Իննա Օլսկայայի դիմանկարները, «Դերասանուհին», «Կնոջ դի- մանկարը» և այլ աշխատանք- ներ: Այստեղ պետք է նշել Ռ. Խաչատրյանի արվեստի մեկ այլ առանձնահատկություն. որքան նկարիչը բժախնդիր է բնորդի դեմքը ճշգրտորեն պատկերելու հարցում, նույն- քան ակտիվ է նրանց շրջա- պատող իրերը կամ հարդա- րանքը, ձևը նյութականացնե- լու ժամանակ: Սա նատուրա- լիզմ չէ, այլ ընդհանրացման այն մակարդակն է, երբ նը- կարն ստեղծվում է ճշմարտու- թյան ձգտման սահմաններում, միաժամանակ բարձրանում է արվեստի մակարդակի: Նրա պատկերած մարդիկ «մաքր- ված են» կենցաղային ման- րուքներից, բացասական կըր- քերից, անաղարտ և ազնիվ զգացումներ հարուցող անհա- տականություններ են և հենց դրանով էլ հմայում, հարազատ են դառնում դիտողին: Նկար- չի գործերը ներգործելու մեծ ուժ ունեն: Միաժամանակ բը-

նորդների զգեստները, հար- դարանքի առարկաները թելա- դրում են պատկերվողի կեց- վածքը, այսինքն կոմպոզիցիա- յի այն տարբերակը, որը բը- նորոշ է միայն ու միայն տըվ- լալ մարդուն:

Անցած երեք տարիների ըն- թացքում առավել բազմազան են դարձել նկարչի կերպարա- յին արտահայտչականության հնարները (հատկապես ան- հրաժեշտ է շեշտել բնորդների ձեռքերին տրվող կարևորու- թյունը), որոնք պայմանավոր- ված են կատարողական բար- ձր կուլտուրայով: Լևկասը՝ կտավին և թղթին փոխարինող փայտի վրա ամրացված կավ- ճախառն հենքը, հնարավոր է դարձնում հասնել մատիտի և սեպիայի հնարավորություննե- ռի բացարձակ արտահայտչա- կանության, նույն գույնի ե- րանգների տարբերակային անցումների գեղանկարչական հնչեղության: Լևկասը որքան հեշտացնում, նույնքան էլ սե- փական պահանջներն է առա- ջադրում՝ գեղեցիկի հասկա- ցության սահմանների չափի զգացում, ճաշակի անաղար- տություն և այլն:

Ռ. Խաչատրյանը առաջին իսկ քայլերից ձգտել է հաս- տատել իրենը, անհատականը, այն կատարյալը, որը նրա համար մարմնավորված է Դյուրերի և Ռեմբրանդտի ար- վեստում: Նա կարողանում է լուծել իր առջև դրված ստեղ- ծագործական խնդիրները:

Ցուցադրված աշխատանք- ներում նրա վարպետության դրսևորումները հավաստում են, որ մենք գործ ունենք ար- դեն ձևավորված և իր անհա- տական դեմքն ունեցող ար- վեստագետի հետ: Դա փաստ է: Արվեստագետին պարտա- վորեցնող բազմախորհուրդ փաստ:

ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ԳՐՈՂՆԵՐԻ ՏԱՆ ՄԵԾ ԴԱՂԻԾ
Հունվարի 26-ին, ժամը 19-ին տեղի կունենա գրա- կան-երաժշտական երեկո՝ նվիրված
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ
ծննդյան 60-ամյակին: Մուտքը՝ հրավիրատուներով:

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ ԿԱՐԼԵՆ ԱԶԱՐՅԱՆ

Խմբագրական կոլեգիա — Ն. ԱԴԱՆՅԱՆ (գլխավոր խմբագիր), ԱՂԱՎՆԻ, ՀՈՎՀ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Վ. ԴԱՎԹՅԱՆ, ՀՐ. ԹԱՄՐԱԶՅԱՆ, Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Հ. ՀՈՎ. ՀԱՆՆԻՍՅԱՆ, Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Հ. ՍԱՀՅԱՆ, Ս. ՍԱՐԻՆՅԱՆ

